Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման

ակադեմիայի ռեկտոր Խ.Ղազեյան

«26» 06 2023թ

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի 2023թ. հունիսի 23-ին կայացած նիստի № 5 արձանագրությունից

Մասնակիցներ

Ա. Եզեկյան	-	իրավագիտության ամբիոնի վարիչ
Վ. Ստեփանյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գ. Դանիելյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հ. Հակոբյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լ. Հակոբյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Ասատրյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Թ. Շաքարյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ. Մկրտչյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու
Գ. Նավասարդյան	-	իրավագիտության ամբիոնի դասախոս

Լսեցին՝

ԺԲ 00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կարավարում) մասնագիտությամբ Հայաստանի եվրոպական համալսարանի ասպիրանտ Էդգար Գուրգենի Ավետիսյանի՝ **«Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (Սահմանադրաիրավական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)»** թեկնածուական ատենախոսության վերաբերյալ որպես առաջատար կազմակերպություն կարծիք ներկայացնելու հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

Ամբիոնի վարիչը նշեց, որ իրավ. գիտ. թեկնածու Միհր Մկրտչյանը ծանոթացել է ատենախոսությանը, կարծիք է տվել, համաձայն որի՝ քննարկվող ատենախոսությունը կատարված է որոշակի խորությամբ և ունի հիմնավորվածության որոշակի մակարդակ, ինչի հիման վրա ՀՀ պետական կառավարման ակադեմիան, որպես առաջատար կազմակերպություն, կարծիք է կազմել, որը ներկայացվում է ձեր քննարկմանը:

Ելույթ ունեցան՝

Ի.գ.դ.,պրոֆ. Գ.Դանիելյանը, ի.գ.թ., դոց. Ա.Եզեկյանը, ի.գ.դ.,պրոֆ. Վ.Ստեփանյանը, ի.գ.թ., դոց. Թ.Շաքարյանը, ի.գ.թ. Մ.Մկրտչյանը և ի.գ.թ., դոց. Ա.Ասատրյանը: Նրանք կատարեցին առաջարկություններ և դիտողություններ:

Քննարկման արդյունքում հաստատվեց ատենախոսության վերաբերյալ հետևյալ կարծիքը.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԷԴԳԱՐ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի պաշտպանության ու ապահովման, այդ թվում՝ ընդհանրապես տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու, ինչպես նաև հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու շուրջ առաջացող սահմանադրահիրավական հարաբերությունների ուսումնասիրությանը: Հետազոտության առարկան են կազմում՝ տեղեկատվության ազատության էությունն ու նշանակությունը, բովանդակությունը, դրսևորումները, եվրոպական իրավական չափորոշիչները, ընդհանուր տեղեկություն-

ների ազատությունն ու հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքը, մամուլի ազատությունը, պետության գործունեության հրապարակայնությունն ու վերջիններիս շրջանակում անձի տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովման ու պաշտպանության հիմնախնդիրները:

Թեկնածուական ատենախոսության նպատակը տեղեկատվության ազատության ժամանակակից բովանդակության ներկայացմամբ ու գիտական ուսումնասիրությամբ տեղեկություններ փնտրելու, ստանալու, տարածելու, ինչպես նաև հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքների իրացման շուրջ առաջացող հիմնախնդիրների վերհանումն է, իսկ որպես վերջիններիս ընդհանրացման արդյունք՝ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովումն ու պաշտպանությունն առավելագույնս երաշխավորող իրավական մոտեցումների բացահայտումը:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ ներկայացվել է հայկական իրավական մտքի պատմությունում տեղեկատվության ազատության ունեցած դերն ու զարգացումը, ՀՀ Սահմանադրությամբ որդեգրած՝ կարծիքի արտահայտման ազատության ու տեղեկատվության ազատության հարաբերակցությունը, ընդհանուր տեղեկատվության ազատությունն ու հատուկ տեղեկատվության ազատությունը, տեղեկատվության ազատության ու ժամանակակից իրավունքներից՝ մոռացված լինելու իրավունքի մրցակցությունը, հատուկ՝ հանրային մարմինների մոտ գտնվող տեղեկությունների ազատության երկու դրսևորումները՝ տեղեկություն ստանալու և տեղեկացված լինելու իրավունքները, ինչպես նաև մասնավոր մարմիններից տեղեկություն ստանալու իրավահարաբերությունների վերաբերող հիմնահարցերը:

Ատենախոսը հետազոտության ընթացքում լայնորեն օգտվել է քննարկվող հիմնախնդրին առնչվող ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան մասնագիտական գրականությունից: Հեղինակը ուսումնասիրել է նաև քննարկվող թեմային առնչվող ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև

միջազգային կազմակերպությունների և դրանց խորհրդակցական մարմինների՝ հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող ակտերն ու իրավահամեմատական վերլուծությունները:

Ատենախոսության թեմայի գործնական նշանակությունը պայմանավորված է քննարկվող իրավունքի ապահովման ու պաշտպանության կապակցությամբ պրակտիկայում առաջացող խնդիրների վերհանմամբ և դրանց որոշակի լուծմանն ուղղված առաջարկների ներկայացմամբ:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից: Առաջին գլխում հեղինակն անդրադառնում է տեղեկատվության ազատության որպես մարդու հիմնական իրավունքի էությանը և դրա ապահովման սահմանադրաիրավական հիմքերին և առանձնահատկություններին: Ատենախոսության այս հատվածում հեղինակը ներկայացնում է տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ծագումն ու զարգացումը, տեղեկատվության ազատության իրավունքի ընդհանուր տեսաիրավական հիմքերը և եվրոպական իրավական չափորոշիչները, ներկայացվում է կարծիքի արտահայտման ազատության և տեղեկատվության ազատության հարաբերակցությունը ՀՀ Սահմանադրությունում:

Երկրորդ գլխում ատենախոսն անդրադառնում է ընդհանուր տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրներին: Մասնավորապես, անդրադարձ է կատարվում ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանադրաիրավական երաշխիքներին և առանձնահատկություններին, ՀՀ-ում ընդհանուր տեղեկատվության ազատության պաշտպանության շրջանակին և եվրոպական իրավական չափորոշիչներին, ներկայացվում է մոռացված լինելու իրավունքի և ընդհանուր տեղեկատվության մրցակցության ազատությունը ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է հատուկ տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրներին: Հետազոտության այս մասում ատենախոսը վերլուծում է հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքի և տեղեկացված լինելու իրավունքի

ապահովումը միջազգային ու եվրոպական չափորոշիչների լույսի ներքո: Անդրադարձ է կատարել նաև մասնավոր մարմինների նկատմամբ հատուկ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի կիրարկման իրավական սահմաններին:

Հեղինակը համակողմանիորեն վերլուծել է ուսումնասիրության առարկա հանդիսացող խնդիրները և կատարել համեմատական վերլուծություններ: Հեղինակն իր ուսումնասիրությունների արդյունքում ներկայացնում է տրամաբանական եզրահանգումներ, որոնք ներկայացված են պաշտպանության դրվող յոթ դրույթներում և աշխատության վերջում՝ «Եզրակացություն» բաժնում:

Այդուհանդերձ, կարելի է ներկայացնել որոշակի նկատառումներ, որոնք, մեր կարծիքով, կբարձրացնեին աշխատության ընդհանուր գիտական և պրակտիկ արժեքը, որոնք հեղինակը նաև կարող է օգտագործել իր հետագա գիտական գործունեության ընթացքում.

1. Պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթում բացակայում է գիտական նորույթը, քանի որ նույնիսկ հեղինակն է նշում, որ *հաստատում է* այն, ինչն ըստ էության արդեն իսկ իր արտացոլումն է գտել համապատասխան օրենսդրական կարգավորումներում: Այլ խոսքով, հեղինակն ամբողջացնում է տեղակատվության ազատությանը վերաբերելի՝ արդեն իսկ օրենսդրորեն ձևակերպված սկզբունք-չափոփորոշիչները, ինչը կարծում ենք, որպես պաշտպանության ներկայացվող դրույթ ներկայացնելը նպատակահարմար չէ:

2. Պաշտպանության ներկայացվող յոթերորդ դրույթում (տե՛ս էջ 14) հեղինակը նշում է. *«(...) արձանագրվել է, որ պետական և տեղական մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկությունները կարող են անմիջականորեն կապված լինել պետական անվտանգության պաշտպանության հետ, որոնց հրապարակումը հնարավոր վնաս կհասցնի պետական անվտանգության պաշտպանությանը: Հիմք ընդունելով վերջինս՝ ատենախոսությամբ հիմնավորվեց պետական անվտանգության պաշտպանության նպատակով հատուկ տեղեկատվության ազատության իրավաչափ սահմանափակում նախատեսելու անհրաժեշտությունը»:* Հեղինակի նշված պնդման հետ կապված հարկ է

արձանագրել, որ ՀՀ սահմանադրության 51-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը **սահմանվում են օրենքով**, իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է **պետական**, ծառայողական, բանկային, առևտրային **գաղտնիք**: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական անվտանգության պաշտպանությանը վերաբերող տեղեկատվությունը անհրաժեշտաբար համարվելու է պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություն, գտնում ենք, որ հեղինակի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթում բարձրացված խնդիրն արդեն իսկ լուծված է օրենսդրական մակարդակով:

3. Ատենախոսության մեջ առկա են մի քանի ձևակերպումներ, որոնք ճշգրիտ չեն: Մասնավորապես, ատենախոսության 7-րդ էջում նշվում է, որ *հետազոտության իրավական հիմքերի շարքում առաջնային տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային կարևորագույն այնպիսի պայմանագրեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (...)*, մինչդեռ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր, իսկ 23-րդ էջում օգտագործվում է *«ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողով»* ձևակերպումը, մինչդեռ Եվրոպական տնտեսական հանձնաժողովը ՄԱԿ-ի մարմին չէ:

4. Ատենախոսության գիտագործնական արժեքն ավելի կբարձրանար, եթե հեղինակն ավելի մեծ ուշադրություն դարձներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի խնդրահարույց կարգավորումներին ու եզրույթներին և առաջարկեր դրանց լուծման գործնական ուղիներ:

Այդուհանդերձ, թվարկված նկատառումները չեն նսեմացնում աշխատանքի վերաբերյալ բավականին դրական տպավորությունը և ընդհանուր գիտական արժեքը:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Էդգար Գուրգենի Ավետիսյանի՝ **«Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (Սահմանադրաիրավական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, վերոհիշյալ նկատառումները չեն նսեմացնում հետազոտության արժեքը, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է իր կողմից **ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք»** մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Որոշեցին՝

Էդգար Գուրգենի Ավետիսյանի՝ **«Տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (Սահմանադրաիրավական երաշխիքների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում)»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, աշխատանքում առկա թերությունները էական բնույթ չեն կրում և ատենախոս Էդգար Գուրգենի Ավետիսյանն արժանի է **ԺԲ.00.02 («Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»)** մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հաստատել առաջատար կազմակերպության կարծիքը:

Իրավագիտության ամբիոնի վարիչ՝ **Ա. Եզեկյան**